

արձանագրել հոս ինչ որ կը գրէ 1650ին յիշատակագիր մը¹.

«Ընդ այս ժամանակս ընաւին բարձեալ էր վարդապետ անուն յարեւելեան աշխարհէ . բայց եթէ կային եպիսկոպոսք՝ էին արժանի բամբասանաց , զնալով արտաքոյ կրօնից իւրեանց : Վասն որոյ ընաւին խոսանացեալ էին մարդիկ ի գիտութենէ եւ ի գործոց . իսկ առաքելաշնորհ այրս այս Մովսէս , իբրեւ էարկ սերմն կենաց ի տունս արեւելեան , իսկոյն արմատացաւ , աճեաց եւ ետ պտուղ բազմապատիկ . . . » :

Թէպէտ ժողովուրդը յօժարութեամբ կ'ունկնդրէր քարոզչին եւ կը հետեւէր անոր խրատներուն , բայց «եպիսկոպոսք դաւառաց եւ արեղայք վանօրէից ոչ հաճէին ի քարոզութիւնն Մովսիսի» , վասն զի Մովսէս վարդապետ ինչպէս ինքը մերկ էր ամէն աշխարհիկ իրերէ եւ կ'ապրէր «պահօք եւ սրբութեամբ եւ կրօնաւորական վարուք ըստ հրամանաց գրոց» , նոյնպէս կը քարոզէր , թէ պէտք է ըլլան բոլոր վանականներն ու եկեղեցականները . իսկ անոնք «անգոսնեալ զբանս նորա՝ ոչ ընկալան» (Առ . 288) :

«Վանօրէից արեղայքն , կը գրէ Դարանաղցի , որ ամէնքն առ հասարակ սուտ եպիսկոպոսք էին եղեալ վասն միմեանց նախանձու եւ ոչ վասն այլ իրիք՝ ի սուտ անուն կա-

¹ Ձեռ . Էջմ . 2309 . հմտ . Արարատ , 1902 , էջ 436 :